ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.2. Հարավարևմտյան Ասիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները

• • •

Այն գտնվում է Հայկական լեռնաշխարհում՝ ծովի մակարդակից 1648մ բարձրության վրա: Հյուսիսից եզրավորվում է Ծաղկանց, արևելքից՝ Վասպուրականի, Կորդվաց, հարավից՝ Հայկական Տավրոս լեռնաշղթաներով: Արևմուտքից և հյուսիսից եզրավորում է նաև Նեմրութ (Սարակն) և Սիփան (Երկրորդ Մասիս) հրաբխային լեռնազանգվածներով: Հայելու մակերեսը 3574 քառ.կմ է, միջին խորությունը՝ ավելի քան 161մ, առավելագույնը՝ 451մ: Ափագծի երկարությունը 430կմ է: Վանա լիճը անհոսք աղիավուն լիճ է՝ 22‰ (մինչև 24,7‰ աղիություն ունեցող լճերն անվանում են աղիավուն):

• • •

Վանա լիճ են թափվում Բերկրի, Արճեշ, Խոշաբ և այլ գետեր: Շրջապատող լեռների ու լճի ջրի մեղմացնող ազդեցության շնորհիվ ափամերձ գոտին աչքի է ընկնում մեղմ կլիմայով, որտեղ հաջողությամբ հասունանում են խաղող, ջերմասեր պտուղներ: Լիճն հայտնի է միայն այստեղ հանդիպող, ծածանների ընտանիքի տառեխ համեղ ձկնատեսակով: Հայտնի է վանա կատուն, որի աչքերն ունեն տարբեր գույներ:

Վանա լճով կա լաստանավային (պարում) երթևեկություն՝ Վան–Դատվան երթուղով: Կա երթուղային լաստանավ է, որովհետև գնացք է տեղափոխում:

• • •

Շատ գետեր գովերգվել են համաշխարհային մշակույթում, ժողովրդական ավանդազրույցներում: Անվանել են «մայր գետեր», «դրախտի գետեր», «քաղաքակրթության մեծ գետեր»: Դրախտի գետերից երեքը՝ Եփրատ,

Տիգրիս, Արաքս (Գիհոն), սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհից և պատահական չեն «Հայաստան դրախտավայր», «Հայաստան՝ երկիր դրախտավայր» արտահայտությունները: